

ԴԱՏԱՍՏԱՆ Ի ՎԵՐԱՅ ԽՈՐԵՆԱՅԻՈՅՆ ԵՒ ԴԱՏԱԻՈՐ ՆՈՐԱ՝

Յիշեն անշուշտ պատուական վերձանողք զի 'ի թարգմանութեանս անդ իմում 'ի նախաշաւիղ սուղ բանս՝ խոտովանեցայ յանկեղծաւոր մտաց զտկարութիւն իմ՝ի պատշաճ պատասխանատուութիւն և 'ի լուծումս ծանր ծանր խնդրոց և տաւրակուանաց գերմանիկ գիտնականին, աւագագունի քան զիս գործ արժանի դատեալ զայն: Վասն որոյ և այժմ գամ՝ի համառօտադոյն իմն լուսաբանութիւն բանից հեղինակին քան թէ 'ի պատասխանատուութիւն. և զայս առնեմ վասն հանդարտելոյ զմիտս ոմանց՝ որոց թուեցայ թերեւ ուրեք ուրեք ամենեւին համախոհ օտար դատաւորին 'ի նիւթ ընտանի, և դատախազ յանիրաւի դատաւիւտելոյն:

Վասն համառօտասիրութեան և դիւրիմաց լինելոյ լաւ համարեցայ զբաւորաւ կան օրինաւոր բարբառով զիսօս իմ յօդել քան թէ արդի աշխարհիկ անկանոն լեզուաւ:

Այն և դարք ինքնաբեր արգասեօք իւրեանց եղծանեն, բազում այն է յանիւրաւի, ոչ միայն զնեղկային այլ և զանցելոյն զգորութիւն. որպէս զգնացելոյն վաղանցով նշխար զտուեալն հողոյ՝ նոյն և զյաւիտենական յիշատակ բարեաց կամ չարաց՝ կարեն կամ ճշնին կարող լինել արատել կամ ըստ ոչ արժաւնոյն 'ի փառս վերբերել: Բայց ճշմարիտ պատմութիւն մարդկան աղդի չերաշխաւորեաց տակաւին ուրեք երբեք թէ ամաց և դարուց շրջանք հզօր իցեն քան զճշմարտութիւն և տեսող: Ճշմարտութիւնն դար քննադատական պատմութեան անմահ անուամբ պսակէր արդեօք զվերս ժամանակ՝ եթէ արժանի ցուցեալ էր այնպիսում պսակի. զի քննադատութիւն՝ որ բով և հալոց չէ ճշմարտութեան, անշուշտ ճշմարտակրկիտ բորենի և տարտարոս է նորա:

Յսասարիզի անդ գիտութեան՝ ամենեցուն իրաւանց առաջին ոտնփոխ դատելն է. բայց հարկն բանաւոր պահանջէ զի այս ծանր քայլափոխ անմասն 'ի զաշաւցու կողմնասէր բարոյից, 'ի կանխակալոյ կարծեաց և 'ի սիրոյ նորադոյնս ինչ աւելոյ կամ հնարելոյ՝ լիցի միայն վասն ճշմարտութեան: Զի ո՞ր փառք են և հանճարոյ արժանաւոր պարծանք՝ զբնական, բարոյական և քաղաքական արդեամբք պարարտացեալ անուանս աղարտել, 'ի միոյ 'ի կրից աստի ժիտողասէր ցանկութեան ձգեալ: Փերածայրեալ անգամ մատենադրաց և գիտնոց զոն բիծք և աւրատք, ըստ առածին թէ և Արամազդայ են ժամք քնոյ, ապա որովք պատճառք զամբ մանր դիտել զսխալանս նոցին, նոքիմբք և զնոցին բուն և զստոյգ պատճառս ստիպիմք խնդրել զտանել յարդարութիւն նոցին և ոչ յանողորմ՝ դատաւարաւորութիւն: Ինչ մի արդարացի դիտեալ նկատեալ է միշտ յանարդար քննադատութիւնս. մատենադիրն մեծ է և հանճարեղ 'ի վրիպակս իւր՝ քան թէ յոչ վրիպական: Եզր գրիչ օրինաց, կարող է զողջոյն ըստ թիւր քննադատութեան, իսկ զհին կտակարանին զգիրսն յանհնարինս զանաղանեալս յիրերաց՝ նիւթով, ոճով և ամենայն հանգամանօք օրինաց գրութեանս արուեստին, յանձնէ տալ 'ի գիր, բայց չկարէ խմբագրել զգիրեալն 'ի Մովսիսէ և որ ըստ նմանէ մատենադրացն 'ի մի: Այս և մերումս Մովսիսի Խորենացոյ հանդիպի՝ ըստ կարծեաց քննադատին. ճարտար է Մովսէս զաղբիւրս պատմութեան Հայոց հնարել և զանյարիրս գեղեցկապէս 'ի մի յարել, բայց յեղելոյ աղբերաց զպատմական զէպսն ժողովել և 'ի մի զուգել մարմին՝ անմարթ էր նմա. եթէ զվասն էրն հար-

1 Գերմանացի Կուզմիտ գիտնականին Խորենացոյ վրայ գատաստանը, Բազմալէպ ԼԵ, 45:

ցանեա, վասն զի 'ի ժամանակին չէին 'ի միջի նոյն աղբիւրքն. որով հաւասար է աստ ասելն գոյր և չգոյր. որովհետեւ Մովսէս նուիրական դը 'ի պատմութեան և հնագոյն ժամանակաւ քան զդատաւորն իւր՝ գոյութեան աղբերացն իւրոց վկայէ, իսկ դատաւորն իւր զհակառակն պնդի ասել. անշուշտ առաւելութիւն գիտութեան դատափետեղոյն կամ դատողին հակեցուսցէ զնժար կշռոյ հաստաւութեան և ճշմարտութեան :

Են են 'ի պատմագրութեան խորենացւոյն պատմական և ժամանակագրական վրիպակք աններելիք, այլ թէ գոյս 'ի նոցունց 'ի պատմահայրն անդր հանել արժան է արդարութեամբ, տակաւին ժամանակի և երկար քննութեանց կարօտի, և վաղվազել վճիռ տալ ոչ է խոհականութեան : Եթէ դիպեալ էր մեր մեծի գիւտին և ցանկաւոյ՝ Չորրորդի յիշատակեալ գրոց խորենացւոյն, կամ հնագոյն օրինակի պատմութեան քան զորս 'ի ձեռին ունիմք, յայնժամ մարթ էր թերեւս ստուգագոյն ինչ իմանալ և դատել. այլ 'ի պայմանիս յոր կամքս և 'ի ժամանակիս՝ մնալ միայն պարտ է մեզ յուսով բազում լուսաւորութեանց. թող զայս, մանր մանր հանգամանք ժամանակին՝ յոր եկաց պատմագիրն, պատմութեան, պատմական ազգին և պատմագրին, գիտնն անպարտ արձակել ոչ միայն զխորենացի այլ և զդատաւոր նորա՝ եթէ կայր 'ի նմին պայմանի :

Եթէ դատախազն պատմահօր մերոյ դատափետէր զնա միայն իբրև զաղբիւր տիեզերական պատմութեան՝ իրաւունք էին նմա, և համախօհ էաք արդեօք 'ի բազում ինչ իրս, այլ նա զսահման իրաւանց լայնէ ընդարձակէ՝ փորձ փորձեալ խել յատակել զինուած տոհմային պատմութեանս մերոյ, ուրանալով զգոյուլ թիւն Մար Աբասայ, որում բովանդակ հին գիտնական աշխարհ ազգիս վկայէ և հաստատելով զգոյութիւն ժամանակաւ և ազգաւ մերձաւորի ուրուք Մար Աբասայ, որոյ գոյութեան կարծիք միայն վկայեն :

Զգիտեմ որով քննադատութեամբ կեղակարծ միով միայնով հատուածիւ որ ըստ պատմահման զառաջին էջս ունի Սեբէոսի 'ի Հերակլ ասացեալ պատմութեան, կարէ որ զդոյն ուրանալ և զգոյն հաստատել : Նախ կեղակարծ հատուածոյն համառօտ, չփոթ և խառնխուռն նախերգանացն՝ ո՞րք իցէ հայր՝ չէ մարթ ստոյգ ինչ ասել կամ գուշակել : Երկրորդ, առաւել հնարաւոր էր առ թարգմանչօքն ծանօթ լինել թէ Մծուրնեցի փիլիսոփային և թէ արձանագրութեանն՝ քան թէ Սեբէոսի 'ի կէս եօթներորդի դարուն. և սակայն իսպառ լուրթիւն է զայս. պիտեաց առ մերս : Եւ լուրթիւն այսպիսի չէ ինչ առանց յանցանաց՝ եթէ արդարև գուցէ լիալ Մարաբաս որ մծուրնեցի փիլիսոփայ առ Արշակաւ երրորդիւ և վաղարշակաւ երկրորդիւ. զի ընդ վերջին թագաւորս և ընդ թարգմանիչս մեր և ոչ երեսնամեայ միջոց ժամանակի կայ 'ի միջի. ուստի եթէ ոչ մծուրնեցի փիլիսոփային, գէթ յԱղաթանգեղեայ կարծեալ բանիցն հանեալ արձանագրութեան պարտ էր թարգմանչացն գոլ ծանօթս. այն զի առ նոքօք 'ի հարկէ և 'ի բնէ առաւել մօտ իմն կցորդութիւն էր մերոցն ընդ պարսիկ Դրանն՝ քան թէ յեօթն երրորդում դարու, յորում բարձաւ պետութիւն Պարսից, կարին ապա ուսումնաւ սեր խոզարկութիւն՝ որպէս հեղինակ կեղակարծ հատուածոյն՝ միջնորդաւ իւրի 'ի ձեռս բերել զարձանագրութիւնն և ընդ 'ի բազմաց յիշեալն Ագաթանգեղեայ՝ յիշէին և զարձանագրութիւն նորա՝ Բաւելից և զերրորդ իմն խորհրդածութիւն. եթէ մերքն առ չահ օգտի ազգասիրութեան կամ թէ առ սեր խաղաղութեան չտեսոյն առնէին զանդէպ և զանիրաւ համարձակութիւն ազգակցի իւրեանց և գործակից հայ պատմագրին, հիմ լռեցին աշակերտք մծուրնացւոյն առ որս դտաւ օրինակն արձանագրութեան, և ոչ ծանակեցին զնա նենգաւոր գործովն իւրով :

Ոչինչ անդէպ է կարծել, և թերևս և հաւանութեան իսկ է, թէ նոյն հնագոյն

Մար Աբաս կատինայ է և խորենացւոյն և սերէոսեան հատուածոյն միանգամայն աղբիւր, և ոճ խօսից վերջնոյն 'ի ճահ պատահէ աւուրոյն թարգմանչաց : Յիրս իրս միայն չմիաբանին, և այն չէ ինչ զարմանալայ իմաստնոց : Մովսէս թէ ուստի ունի զնախնեացն վէպս՝ ոճով իմն և կարգաւ աւանդէ, բայց սերէոսեան հաւուածոյն յառաջարկն՝ մասամբ Սերէոսի թուի գործ և մասն ինչ Ագաթանգեղայ անուամբ ծայտեալ խորագրաւ հանդերձ նորա որ եզիտ զառաջինն և կամ յաւել 'ի պատմութեան Սերէոսի : մին սուղ է և համառօտագիր, իսկ միւսն լայն և ընդարձակ . և այլ ամենայն զանաշանութեանցն որ ընդ սա և ընդ խորե, նացի՝ թարգման կացցէ հաւատարիմ զիւտ և զարգացումն ազգային հնախօս պատմութեան :

Խոստովանել արժան է թէ դատախազ խորենացւոյն ոչ վարկապարզի ոք է այր, այլ զամենայն ճիգն թափէ արդարադատ հանդիսանալ, և ոչ մի ինչ հաստատէ առանց համոզեցուցիչ թուեցեալ ցուցակութեան, և զցուցակութիւնսն 'ի բանից անտի խորենացւոյն յառաջ բերէ : Եւ այս ևս յայտ է թէ զբրմանացի գիտնականն ոչ այնքան 'ի ծայրայեղն խոտորէր, եթէ գիտակ էր ամենայնիւ պատմութեան ազգիս, նա մանաւանդ դպրութեան, զայս ակամայ անգիտութիւն և ինքն խոստովանի ուրեք :

Զարդիս 'ի քննադատութենէ պատմութեան չէ պարտ երկնել, զի որչափ և զանգալիցէ աստ և անդ՝ 'ի վախճանի 'ի բուռն հարկէ բերեալ՝ ճշմարտութեան դառնայ լինի ջատագով :

Թէպէտ ամենեցուն ծանօթ է հատուածն անյայտ ¹ հեղինակին որ 'ի Սերէոսի պատմութեան, և գաղղիական թարգմանութեան ² նորին 'ի ձեռս յածի ամենայն հայագէտ և հայասէր բանասիրաց արևմտից, սակայն ոչ անդէպ է գործ յետ քննադատութեան Գերմանացւոյն, որ գլխովին յայն յենու հատուած բանի ուրանալ զգոյրթիւն բուն Մար Աբասայ կատինայի, առաջի առնել առողջամիտ և քաջախոհ քննողաց զնոյն հատուած, ծանօթաբանելով ուրեք ուրեք և զխոտորումն նորա 'ի բանից խորենացւոյն 'ի տեղիս տեղիս նշանակելով : Թէ ո՞ր յերկուցն զբնագիր լինելոյ ունի զպատիւ՝ արդէն փոքր 'ի շատէ ասացաւ 'ի մէնջ. իսկ զստոյգն քննադատական ներքին և արտաքին պատճառօք և ցուցիւք մնամք լսել յաւագ հմտից և 'ի գիտակաց :

« Եւ եղև ոչ 'ի կամայական պիտոյից վարժ խուզարիի ջան ստորագրել զժամանակ և զնախնի քաջացն ձեռնարկելով դրոշմել վիպասանութիւն, զիմն յիշատակել զառասպելս, և 'ի նոյն չարագրելով ասացից համառատիւք զարդեաց ժամանակաց զաղետիցս վերաբերութեան զամս և զաւուրս հինգ թագաւորացն յիշատակելով : »

« Անդ հայելով 'ի մատենն Մարաբբա փիլիսոփայի Մծուրնացւոյ, զոր եզիտ զդրոշմալ 'ի վերայ արձանի 'ի Մժբին քաղաքի՝ յապարանսն Սանատրուկ արքայի հանդէպ զրան արքունական տաճարին, ծածկեալ յաւերածի արքունական կայենիցն : »

« Քանզի զսիւնս տաճարին այնորիկ խնդրեալ 'ի դուռն արքային Պարսից, և բացեալ զաւերածն վասն սեանցն ըստ գիպան արձանագրին դրոշմեալ 'ի վերայ վիժի զամս և զաւուրս հինգ թագաւորացն Հայոց և Պարթևաց՝ Յունարէն դրպ :

¹ Պատմութիւն Սերէոսի եպիսկոպոսի 'ի Հերակլ ընծայեալ 'ի 1771 յամի 1851—1861 'ի Կոստանդնուպոլս 'ի Միւհէնտիսեան տպարանի դպրութիւնսն :
² Collection des Historiens anciens et modernes de l'Arménie par Victor Langlois, I. 195. Le pseudo-Agathange. Histoire ancienne de l'Arménie.

բութեամբ. զոր իմ գտեալ 'ի Միջագետս' 'ի նորին աշակերտացն, կամեցայ ձեզ գրուցակարդել. քանզի այսու ունէր վերնագիրն այսպէս :

« Ես Ագաքանգեղոս գրիչ գրեցի 'ի վերայ արմանիս այսորիկ իմով ձեռամբս զամս առաջին քաղաքորացն Հայոց, հրամանաւ քաջին Տրդատայ՝ առեալ 'ի դիւանէ արքունի :

Զոր փոքր մի և ապա յիշրոմ տեղուցն տեսցես զպատձէնն :

« Բայց ես նախ առաջին զվէպս յաւհեղն արքայ՝ և յարի այրն սկսայց աւսել, նախ զնախնեացն պատմութիւնս՝ ուստի եղև սկիզբն ամենայն երկրի շիւնուածոց լրմանց. և անտի 'ի սոյն պատուաստելոյ յաւգիւ զգրուցակարգութեան վէպս հսկայազանցն՝ և զառասպելս ունայնս անհանճար զաւրացն. զոր 'ի մեծ երկանցն աշտարակին յղուծիւն ծնանելով ցրէր ընդ մեծ անապատ անթիւ, որ 'ի կայս անլուրս ձայնից անդադար 'ի վերայ առն ընկերի աւանդոյ սուրն Տիւան. յորում առաջին թագաւորեաց 'ի վերայ երկրի » :

Խորեն. « Ահեղք և երևելիք առաջինքն 'ի դիցն, և աշխարհի մեծամեծ բարեաց պատճառք, որ սկիզբն աշխարհի և բազմամարդութեան : Եւ 'ի սոցանէ հատեալ գտան ազգ սկայիցն, անհեղեղք, յաղթանդամք մարմնով և վիթխարիք, որք յղացեալ ամբարտաւանութեամբ ծնան զամբարիշտ խորհուրդ աշտարակայինութեանն, և 'ի նոյն ինչէին 'ի գործ անկեալք. յոր հողմ ահագին իմն և աստուածային շնչեցեալ 'ի դիցն ցառմանէ, ցրէ զամբարտակն. և մարդկանն անլուր բարբառս իւրաքանչիւր ումեք բաշխեալ, աղմուկ չլիութի 'ի մէջ անկանէին » (Ա. թ.) :

« Եւ Բէլն Տիտանեան 'ի վեր կարծէր զինքն քան զամենայն ազգս մարդկան՝ զիւրն ոչ ճանաչելով զքնութիւն, այլ զամենայն ազգս մարդկան 'ի ծառայութիւն իւր կոչէր : Ապա յայնմ ժամանակի Հայկն Աբեթածին ոչ կամեցաւ հնազանդել 'ի ծառայութիւն Բէլայ արքայի. արհամարհեաց զնա աստուած կոչել. անդ Բէլ 'ի վերայ Հայկին յարձակեալ մարտիւ. իսկ Հայկն արի՛ աղէ. զամբ հալածեաց զնա » :

« Արդ՝ այս է Հայկն՝ որ ծնաւ զԱրամ, մանեակ զորդի իւր 'ի Բաբելոն : Եւ ծնաւ Արամանեակ ուստերս և դստերս բազումս՝ յորոց անդրանիկն Արամայիս : Եւ ծնաւ Արամայիս ուստերս և դստերս բազումս, յորոց անդրանիկն Ամասիա : Եւ ծնաւ Ամասիա ուստերս և դստերս բազումս, յորոց անդրանիկն Գեղամ : Եւ ծնաւ Գեղամ ուստերս և դստերս բազումս, յորոց անդրանիկն Հարմա : Եւ ծնաւ Հարմա ուստերս և դստերս բազումս, յորոց անդրանիկն Արամ : Եւ ծնաւ Արամ ուստերս և դստերս բազումս յորոց անդրանիկն Արայն գեղեցիկ » :

Սա (Հայկ) ... ծնաւ զԱրամանեակ 'ի Բաբելոնի ... այս Արամանակ ... ծնաւ զԱրամայիս ... Արամայիս ծնանի զորդի իւր զԱմասիա ... Ամասիա ... ծնանի զԳեղամ ... Գեղամ ծնաւ զՀարմա ... Հարմա ծնաւ զԱրամ ... Արամ ծնաւ զԱրայն ... (Խոր. Ա. Ժբ.) :

« Արդ այս են անուանք ազգածինն առանց անդր անկելոցն 'ի Բաբելոն (գընացելոցն) ընդ կողմանս հիւսիսոյ յերկիրն Արարադայ : Զուեաց խաղաց գը-

Այս Հայկ ... նախնի Հայաստանեայց. և այս ազգ նորա և ծնունդը... (Խոր. Ա. Ժբ.)

Զու արարեալ զնայ յերկիրն Արա-

նաց Հայկն 'ի Բաբելոնն՝ կնանն և որ-
դուլքն՝ և՛ ամենայն աղիսին հանդերձ :
Եւ չոգաւ բնակեցաւ յերկիրն Արարա-
դայ 'ի տանն որ 'ի լեռնոտիսն որ զա-
ռալին շինեալ էր Զրուանայ հօրն՝ և
եղբարքն հանդերձ :

« Եւ ապա ետ զնա Հայկն կալուած
ժառանգութեան կաղմեայ թոռին իւ-
րոյ որդւոյն Արամնակայ : Եւ ինքն
չուեաց զնաց անտի ևս 'ի հիւսիսա-
կողմն, և չորս բնակեցաւ 'ի բարձրա-
ւանդ գաշտավայրի միոյ . և կոչեցաւ
անուն գաշտին այնորիկ Հարք, յանուն
Հարցն :

« Իսկ երկիրն ըստ նմին պատշաճի
կոչեցաւ անուն Հայք՝ որ են հայազամբք
հանդերձ :

« Եւ արդ՝ այս Հայկ հզար զարու-
թեամբ՝ և բարի անձամբ՝ և կորովի ա-
ղեղամբ՝ և մարտիկ յոյժ :

« Յայնմ ժամանակի թագաւորեաց
'ի Բաբելոն որսորդ հսկայ Բէլն Տի-
տանեան ճոխն լատտուածացեալ, որոյ
հզօր զօրութեամբ և սաստիկ յոյժ
զեղ պարանոցի իւրոյ :

« Եւ էր իշխան ամենայն ազգաց՝ որ սփռեցան 'ի վերայ երեսաց ամենայն եր-
կրի . որոյ արարեալ առ աշօք կախարդութեամբ հնարս՝ և հրամանս թագաւո-
րականս ամենայն ազգաց . և հպարտութեամբ ամբարտաւանութեան իւրոյ
կանգնեաց զպատկերն իւր, և ետ երկիր պաղանեղ իրբն աստուծոյ, և զոհս մա-
տուցանել :

« Եւ վաղմաղակի կատարէին ամենայն ազգքն զհրամանս նորա . բայց մի ոմն
Հայկ անուն նահապետ ապագոյն ոչ հնազանդեցաւ 'ի ծառայութիւն նորա, և ոչ
կանգնէր 'ի տան իւրում զպատկեր նորա . և ոչ մեծարէր զնա աստուածօրէն
շքով՝ :

րադայ, որ է 'ի կողմանս հիւսիսոյ,
հանդերձ որդուլք իւրուլք և դստերօք և
որդւոց որդուլք, արամբք զօրաւորօք...
և բոլոր աղիսիւ : Երթեալ բնակէ 'ի լեռ-
նոտին միում՝ 'ի դաշտավայրի, յորում
սակաւք 'ի մարդկանէ յառաջագոյն
ցրուելոցն դադարեալ բնակէին, զորս
հնազանդ իւր արարեալ Հայկ, շինէ
անդ տուն բնակութեան կալուածոց, և
այս 'ի ժառանգութիւն կաղմեայ որ-
դւոյ Արամնակայ : Եւ ինքն խաղայ
այլով աղիսին ընդ արեմնուտս հիւսի-
սոյ, գայ բնակէ 'ի բարձրաւանդակ
դաշտի միում . և անուանէ զանուն լեռ-
նադաշտակին Հարք . այս ինքն աստէն
բնակեալքս՝ ազգի տանն թորդոմայ
(Խոր . Ա . Ժ .) :

Իսկ աշխարհս մեր կոչի յանուն նախ
նւոյն մերոյ Հայկայ՝ Հայք (Խոր . Ա .
Ժա .)

Այս Հայկ գեղապատյաճ և անձնեայ,
քաջազանգուր, խայտակն և հաստա-
բազուկ . սա 'ի մէջ սկայիցն քաջ և ե-
րեսելի լեալ, ընդդիմակաց ամենեցուն,
որք ամբառնային զձեռն՝ միապետել 'ի
վերայ ամենայն սկայիցն և դիւցազանց
(Խոր . Ա . Ժ .) :

1 Ըստ բանիս ըստ այսմիկ ասէ և Վարդան վարդապետ, թէ « Բայց Բէլ հպարտացեալ յանձնու-
նի հասակն վաթսուս կանգուն, հնազանդեցոյց ինքեան զամենայն իշխանս որդէս Աստուծոյ, բայց
'ի Հայկայ... որ ոչ պաշտեաց զնա աստուած, այլ և շուն կոչեաց զնա . և զի եկն 'ի վրայ նորա ծանր
ամբօրիւն, ետան զնա Հայկն նետիւ հարեալ զսիրտն պղնձեօք տախտակեալ (Վարդ . Զ .) :

Վարդէք ճշմարիտ աստուածապաշտութեան Հայկայ առ միջնադարեան պատմագիրս միայն գտա-
նի ընկալեալ և ոչ առ այլ ռք յառաջ քան զնոսա, և Վարդան 'ի Ներքողեանն Լուսաւորին յայտնա-
պէս ասէ . « Անդ ազգին Յակոբայ, որում հրամայեցաւ ջնջել կռապաշտից . և աստ որդւոցն Հայկայ,
որ ոչ պաշտեաց ընդ եօթնաստուն և մի նահապետ երկրի զպատկերն Բէլայ . այլ խրախուսեալ
յԱստուած՝ աստուակեաց զնոր ինքն զկենդանին զառաջնորդն պատկերապաշտութեան (Սուրբ Եր-
Հայկ . Ե . էջ . 43-44) : Թուի թէ 'ի Սերբեոսի ընկալաւ զայս Վարդան . և յառաջ քան զնա այլք . սա .

« Եւ էր անուն նորա Հայկ, ընդ որում ծնաւ արքայի Բէլայ յխուժին մեծ :

« Եւ զօրաժողով լինի Բէլ արքայ 'ի Բաբելոն և դիմէ զնայ 'ի վերայ Հայկայ սպանանել զնա :

« Գայ հասանէ յերկիրն Արարազայ 'ի տունն՝ որ էր նոցա հայրենի՝ զոր չինեալն էր 'ի լեռնոտին . և կադմոս փախստական զնաց 'ի Հարբ առ հայր իւր, ազդ առնել նմա . և ասէ . — Դիմեալ գայ Բէլ արքայ 'ի վերայ քո, և եկն եհաս մինչև 'ի տուն անդր . և ես կնաւ իմով և որդւովք ահաւասիկ դամ փախստական :

« Առնու Հայկն զԱրամենակ և զԿադմոս զորդի իւր . և զորդիս նոցա և զորդիս եւթանեցունց դատերաց իւրոց, արս հսկայս և նուադունս թուով :

« Եւ 'ի դիմի հարկանի Հայկն Բէլայ արքայի . և ոչ կարաց զդէմ ունել բազմութեան արանց հսկայից սպառազինաց :

Խոր . Ա . Ժա . « Ի հաստատել տիտանեան Բէլայ զթագաւորութիւն իւր առ ամենեանս, առաքէ 'ի կողմն հիւսիսոյ զմի ոմն յորդւոց իւրոց առ Հայկ արամբք հաւատարմք, գալնմա 'ի հնազանդութիւն և կեալ խաղաղութեամբ... Ապա զօրաժողով լինի 'ի վերայ նորա տիտանեանն Բէլ ամբօխել հետեակ զօրաց, գայ հասանէ 'ի հիւսիսի յերկիրն Արարազայ մերձ 'ի տունն կազմեայ : փախստական լինի կադմոս առ Հայկ, քաջութեամբիս առաջի իւր առաքէ . Դիտեա, ասէ, ով մեծդ դիւցազանց, զի գիմեալ գայ 'ի վերայ քո Բէլ... և իմ իմացեալ զմերձ լինելն նորա 'ի տուն իմ, փախեայ, և դամ աւասիկ տագնապաւ... Կարգէ զԱրմենակ երկու եղբարքք ընդ աջմէ, զԿադմոս 'ի ձախմէ, զի արբ կորովիք էին յաղեղն և 'ի սուսեր :

« Անդ 'ի դիմի հարկանի Բէլն Հայկայ, և կամեցաւ ըմբռնել զնա Բէլ 'ի բուռն իւր : Խոյս ետ Հայկն յերեսաց նորա և զնայր նա փախստական . և Բէլ զհետ նորա երթայր պնդադոյն հանդերձ զինակրաւն իւրով :

« Զտեղի կալաւ Հայկն, և ասէ ցնա . — Զի պնդեալ գաս զհետ իմ . դարձիր անդրենի 'ի տեղի քո, զի մի մեռանիցիս այսօր 'ի ձեռաց իմոց . քանզի ոչ վրիպի նետ իմ իմիք : — Պատասխանի ետ Բէլ, և ասէ . — Վասն այնորիկ՝ զի մի անկցիս 'ի ձեռս մանկուոյ իմոյ և մեռանիցիս . այլ եկ 'ի ձեռս իմ, և կեանց 'ի տան իմում խաղաղութեամբ, ունելով 'ի գործ զմանկունս 'ի տան իմոյ զորասկանս » :

« Պատասխանի ետ նմա Հայկն և ասէ՝ — Շուն ես դու և յերամակէ շանց՝ դու և ժողովուրդ քո : Եւ վասն այնորիկ թափեցից իսկ այսօր 'ի քեզ զկապարճս իմ — : Եւ արքայն Տիտանեան սպառազինեալ, և վստահացեալ 'ի կուռ սպառազինութիւն անձին իւրոյ ¹ » :

կայն 'ի Խորենացի չեք նշմար վարկածիս : Աս (Հայկ) խրոխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ ռոնաւորութեանն Բէլայ... Գնդի անդ մուգնեալ այր իւրաքանչիւր սուր 'ի կող ընկերի իւրոյ ձգելով ջանային տրեւ 'ի վերայ միմեանց . եւ պատահմանք 'ի դէպ ելանէին Բէլայ՝ ռոնանալ ունել զամենայն երկիր : Որում ոչ կամեցեալ Հայկայ հնազանդ լինել Բէլայ, յետ ծնանելոյ զորդի իւր զԱրմենակ 'ի Բաբելոնի, չու արարեալ զնաց յերկիրն Արարազայ... (Ա . Ժ .) :

1 Ամբանութի աւելի իմն ասէ աստաւոր քան զԽորենացի, որ 'ի տեղւոյն այսմիկ համառօտաբան լինել ախորժեաց : Թերեւս ասորի պատմութեան ընագիրն առաջի աչաց անծանօթ հեղինակին կայր . այլ առաւել հաւանութեան է թէ անծանօթ ժամանակաւ կրտսեր է քան զՄովսէս, և զնորա պատմութեան զնութիւն առեալ՝ որպէս ախորժեաց՝ ուրեք ուրեք ճոխացոյց : Ահա 'ի պատմութեան Հայկազանց բանք Խորենացեոյն հնաւանդ են և դիպան 'ի բերան հեթանոս պատմագրի, այլ 'ի հաւատածի անդ մանաւանդ 'ի բաննս որովք օտարանայ 'ի Խորենացւոյն, քրիստոնէայ և անտեղեակ իմն գրիչ նշմարի : Գորգես նոյն բանք են Հայկայ առ Բէլ որ ինչ Գորդիթու առ Իսաիթ, այլ անդ վայելապէս հեթանոս զք սկայ առ մանուկ ազայ բարբառէր, այլ աստ սկայ առ սկայ բարբառի և չեմուի արգեօք վայելուէ :

« Եւ Հայկն Արեւիկայն մերձենայր եւ ունէր 'ի ձեռին իւրում զաղեղն , որպէս հեծան հզար մայրափայտեայ : Եւ Հայկին զտեղի կալեալ պարտաստի ընդդէմ նորա աղեղամբ :

« Եւ կանգնէ գկապարճոն 'ի գետնոյ ընդ ինքեան յաղեղն ըսկայօրէն կամարին , եւ ընդ գիրկս մտեալ զարու թեամբ հարկանէ նետիւ զտախտակս երկաթիս , եւ ընդ պղնձի վահանն 'ի թափ անցուցանէ ընդ մեղէն արձանն յերկիր խարսխեալ վտարեալ նետն . եւ վազվազակի յերկիր կործանեալ զաստուածակարծեալ հսկայն . եւ զաւրջ նորա փախտական լինէին : Եւ նոքա զհետ մտեալ թափեցին 'ի նոցանէ եւ բամակս ձիոց եւ ջորեաց եւ ուղտուց :

« Եւ Հայկն դարձաւ 'ի տեղի իւր ' եւ չօքա կալաւ Հայկն զերկիրն Արարա գայ . եւ բնակեցաւ անգրէն ազգաւ իւրով մինչև ցայժմ : Եւ 'ի ժամանակի մահուան իւրոյ ետ զնա կալուած ժառանգութեան Կադմեայ թոռին իւրում որդւոյ Արամենակայ եղբօր Հարմայի :

« Եւ Արամենակայ հրամայեաց երթալ 'ի հիւսիսակողմն ուր ինքն իսկ գաղարեաց զառաջինն : Եւ եղև յետ մահուանն Հայկայ՝ առ Արամենակ զորդիս իւր՝ եւ զգատերս իւր , եւ զարս նոցա , զբորս եօթանեսին , եւ զարս նոցա , զուստերս եւ զգատերս նոցա եւ զամենայն աղիս իւր : Եւ չոգաւ բնակեցաւ անդէն յառաջնումն գաւառին , զոր կոչեցին յանուն Հարց իւրեանց Հարց :

« Ապա գնայ անտի եւս Արամենակ 'ի հիւսիսակողմն , եւ երթեալ իլանէ յերկիր մի խորին գաշտավայր , որ կայ 'ի մէջ բարձրաբերձ լեռանց . եւ հասանէ անցանէ ընդ մէջ նորա գետ յորդահոսան . զորով անցեալ Արամենակ բնակէ անդ . եւ շինէ զերկիրն կալուած ժառանգութեան իւրոյ՝ զվայրն լեռնակողմն եւ զառապար :

Ձայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ , յառաջ վարէ զինքն , մօտ հասանէ յարբայն , լի քարէն պինդ զլայնալիճն , զիպուցանէ զերեքթեանն կրճից տախտակին . եւ շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ յերկիր անկանի սլալաքն . եւ այսպէս ճոխացեալն տիտանեան կործանի՝ յերկիր զարկուցեալ , եւ փչէ զոգին : Իսկ ամբոխն տեսեալ զայսպիսի ահագին գործ քաջութեանն , փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց :

Ձկնի այսորիկ դառնալ ասէ Հայկին 'ի նոյն տեղի բնակութեան . եւ Կադմեայ թոռին իւրում բազում ինչ յանկածէ պատերազմին պարգևեաց . եւ յիւրոց ընդօժնացն արս անուանիս : Հրամայէ գնոյն տեղի բնակութեան ունել նմա զառաջնոյ իւրոյ տանն , եւ ինքն երթեալ դադարէ յանուանեալ տեղին Հարց : Սա կեցեալ ամս , ծնաւ զԱրմենակ 'ի Բաբելոնի , որպէս վերագոյն ասացաք , Յետ որոյ կեցեալ եւ այլ եւս ամս ոչ սակաւս՝ մեռանի , յանձն առնելով զբովանդակ ազնն Արմենակայ որդւոյ իւրոյ :

Իսկ Արմենակայ առեալ զամենայն բազմութիւնն , խաղայ յարեւելս հիւսիսոյ , եւ երթեալ իլանէ 'ի խորին գաշտավայրի մի , 'ի բարձրագագաթանց պարսպեալ լեռանց , գետս կարկաջասահ 'ի յարեւմտից ընդ մէջ անցանելով , եւ զգաշտն արեւելից իմն գոգցեն իր որոայսեալ , ձիգ յարեգակն կոյս զերկայնութիւն պարզեալ , եւ առ ստորտողք լեռանցն բազում ականակիտ բղիսեալ աղբւրք , որ դետոց հաւաքումն եղեալ հեղաբար առ սահմանօք

Յայտլայր շատ լիցի բանիւք խորենա-
ցւոյն ցուցանել թէ 'ի կարևորան միա-
բանի ընդ անյայտին . սակաւութք դի-
ցուք այսուհետև գլխաբանութիւնս ան-
յայտին ընդ խորենացւոյն :

Նոցա , ծնիւք լերամբք և եզերքք դաշ-
տին՝ պատանիք ոմանք իբր երիտասար-
դուհիք ճեմիցին : Այլ հարաւայինն ա-
րեգակնաճեմ լեառն՝ սպիտակափառ
ունելով գագաթն , ուղղորդ 'ի յերկրէ
բուսեալ . երեքօրէի , որպէս ասաց ոմն
'ի մերոց , քաջագօտոյ առն չրջապա-
տեալ ճանապարհաւ , և առ փոքր փոքր
'ի շէշտումն անկեալ . ծեր ոմն արդա-
րեւ լեառն 'ի մէջ երիտասարդացեալ
լերանց : Յայտմ խորութեան դաշտի
բնակեալ Արամենակայ , շինէ գմասն
ինչ 'ի հիւսիսոյ կողմանէ դաշտին , և
զոտն լերինն 'ի նոյն կողմանէ , և զլեառն
անուանէ յանգագոյն յիւր անուն Արա-
գած . և զվալուածն Ռոն Արագածու » :
(խոր . Ա . ԺԲ .) :

« Զկնի Արամենակայ՝ որդի նորա Արամայիս շինէ իւր 'ի վերայ գետեզերն
տուն բնակութեան . և անուանէ զանուն նորա ըստ անուան իւրոյ Արամայիւր :
Եւ որդիք նորա սկսան բազմանալ և ընուլ գերկերն :

« Եւ շինեցին դաւառք . մեռաւ և Արամայիս : Եւ ապա յետ նորա Գեղամ :
Մեռաւ Գեղամ՝ և տիրեաց որդի նորա Հարմա : Ապա որդի նորա Արամ¹ : Ա-
պա որդի նորա Արայն գեղեցիկ , որով անուն իսկ դաշտին այնորիկ կոչեցաւ յա-
նուն Այրարադ :

« Եւ Շամիրամ կինն Ասորոց արքային Նինոսի , քանզի լուաւ վասն գեղեց-
կութեան նորա , կամեցաւ առնել ընդ նմա բարեկամութիւն , որպէս զի կա-
տարեացէ զկամս նորա պոռնկութեամբ . քանզի ըստ լրոյ համբաւոյ յոյժ տուփեալ
էր 'ի վերայ անձին և գեղոյ նորա գեղեցկութեանն : Զի ոչ գտանէր յայնմ ժա-
մանակի նման նորա այր ոք՝ ամենեւին այր պատկերաճոխ . յոյժ առ նա հրեշ-
տակս պատարագօք և կոյէ զնա առ ինքն 'ի Նինուէ : Իսկ Արայն ոչ զպատարագն
յանձն առնու և ոչ յանձն առնու երթալ 'ի Նինուէ առ Շամիրամ . ապա առնու
ղջօրան իւր Շամիրամ , և զնայ 'ի վերայ նորա 'ի Հայս : Գայ հասանէ 'ի դաշտն
Արայի , և տայ պատերազմ ընդ Արայի , հարկանէ զօրն , և սպանանէ զԱրայ 'ի
պատերազմին :

« Եւ հրամայէ Շամիրամ տանել զդի նորա 'ի վերնատունն ապարանից իւրոց ,
և ասէ . Ես ասացից աստուածոց լիզուլ զվէրս նորա և կենդանացի :

« Իսկ իբրև նեխեցաւ դի նորա 'ի վերնատանն , հրամայեաց զաղտնի ընկե-
նուլ 'ի վիհ և ծածկել : Եւ զարդարէ զմի զոմն 'ի հոմանեաց իւրոց այր պատշա-
ճող . և համբաւ հանէ զԱրայի լիզուլ աստուածոցն և յարուցանել : Ունի 'ի ծա-
ծուկ և ոչ ումեք 'ի ծանաւթից նորա ցուցանէ զնա . և այնպէս հանէ համբաւ
Արայեղաց տիկինն Շամիրամ² :

« Յայնժամ տիրեաց Շամիրամ 'ի վերայ երկրին Հայաստանեայց . և յայնմ
հետէ Ասորեստանեայց թագաւորքն տիրեցին մինչև ցմեռանելն Սենեքարիմայ ,
ապա ապստամբեցին յԱսորոց թագաւորացն ծառայութենէ :

« Եւ տիրէ 'ի վերայ նոցա Զարեհ որդի որդւոց Արամանկայ , այր զօրաւոր

¹ Մովսէս խոր . Ա . ԺԲ . և որ գկնի :

² Մովսէս խորենացի Ա . ԺԵ . և այլն :

և կորովի աղեղամբ . ապա Արմոգ . ապա Սարգանդ . ապա Շաւաշ . ապա փառ-
նաւաղ ¹ :

« Սա ծնաւ զԲագարամ և զԲագարամ, և Բագարամ ծնաւ զԲիւրամ . և Բիւրամ
ծնաւ զՍպատ . և որդիքն Բագարամայ ժառանգեցին զժառանգութիւնս իւ-
րեանց՝ ՚ի կողմանս արևմտից, այսինքն է Անգեղ տուն . վասն զի կոչեցաւ Բա-
գարամ և Անգեղ, զոր ՚ի ժամանակին յայնմիկ աղգ բարբարոսացն աստուած
կոչեցին ² :

« Այս փառնաւաղ հնազանդեալ նաբուդոդոնոսորայ արքայի ՚ի Բաբելոն . Եւ
ապա յայնմհետէ Բաբելացւոց և Մարաց թագաւորքն տիրեցին մինչև ցԱղեք-
սանդր Մակեդոնացի՝ որ զամենայն տիրեցերս հնազանդեցոյց ՚ի ծառայութիւն :

« Եւ ծառայեցին Մակեդոնացւոց մինչև ցապատմութիւնն Պարթևաց և
Մակեդոնացւոց, և ցհամարծովսն Արշակունեաց թագաւորութեանն . Բանդի
զայն ճառէ ժամանակագիրն՝ այդպէս, որպէս առաջիկ կայ :

« Ի Դամասկոսէ ³ ասեն գնացեալ զՄարսեակն զընդոմինն Արբահամու փա-
խստական լեալ յիսահակայ, և եկեալ բնակեցաւ առ ոտամբ երկուց լեռանցն որ
հային հանդէպ մեծի դաշտին Արայի, յԱրագած կատար և ՚ի Գեղ լեառն :

« Եւ անուանէ զլեռինս յանուն իւր, որում Ազատն կոչեն լեառն : Եւ լինին
նորա երեք որդիք . փառոխ, նա է Եղիազար, և փառոխս կոչեն զտեղի բնակու-
թեանն . և փառականն զաշտ որսոց և արշաւանաց նոցին, որ խառնին յաղգ Ա-
րամենակոյ » :

Ապստամբութիւն Պարթևաց որ եղև ՚ի յայս ժամանակի

« Եւ եղև յետ մահուան Աղեքսանդրի կայսեր Մակեդոնացւոց ծառայեցին
Պարթևք Մակեդոնացւոց ամս վաթսուն և մի . Բանդի թագաւորեաց Սելևկիոս
նիսնովր ՚ի Բաբելոն ամս երեսուն և ութ : Անտիոքոս Սոտեր ամս ինն և տասն :
Անտիոքոս թէոս ամս տասն :

« Եւ յամի մետասաներորդի Անտիոքայ արքայի ապստամբեալ ՚ի բաց կացին
Պարթևք ՚ի ծառայութենէ Մակեդոնացւոց : Եւ թագաւորեաց Արշակ մեծ որդի
արքային թէտալացւոց ՚ի Բահլ Շահաստանի յերկիրն ֆուշանաց, որում ամենայն
աղղբ արևելից և հիւսիսոյ հնազանդեցան ՚ի ծառայութիւն :

« Չուեայ խաղաց զնաց Արշակ արքայն ամենայն զօրքն հանդերձ յարևելից
երթալ ՚ի Բաբելոն, յառաջին թագաւորացն կալուածսն . զի անդ հաստատեսցէ
զթագաւորութիւն իւր . եկն եհաս ՚ի Բաբելոն :

« Իսկ Անտիոքոս իբրև ետես՝ զի անչափ բազմութեամբ եկեալ հասեալ էր ՚ի
վերայ նորա Արշակ արքայն Պարթևաց, այնուհետև ոչ կարացեալ վստահանալ
յիւր զօրացն բազմութիւն՝ ՚ի զիմի հարկանել վիրադին այնմիկ, և խոյս ետ յե-
րեսաց նորա . փախեաւ և գնաց յԱսիաստան : Եւ թագաւորէ ՚ի վերայ Ասիա .

¹ Երեքին թագաւորքս չեն ՚ի կարգի անդ թագաւորացն Հայկազանց ուսնդեւոց ՚ի Խորենա-
ցւոյն (Ա. լա.) ըստ բանից Մար Աբասայ : Այլ զՓառնոսապ չէ ինչ անդէպ նոյն կարծել ընդ Փառ-
նոսայ (Խոր. Ա. Էր.) որ երրորդ եկաց թագաւոր յետ Պարթւրի . և վրաց է Փառնաւաղ անուն
թագաւոր 302-237 Նիս. Բ. Պրատե. Պատմ. Վրաց Ա. էջ. 36 :

² Այս ծննդաբանութիւն վերին Հայկազն թագաւորաց այլ է ամենին քան զաւանդեայն ՚ի
Խորենացւոյն, որ այսպէս կարգէ (Ա. լա.) « Վահագն... Առաւան, Ներսէս, Չարսէ... Արմոգ,
Բագամ, Վան, Վահէ . սա ընդվզեալ, մեռան յԱղեքսանդրեայ Մակեդոնացւոյ : Իսկ զԱնգեղ
տանն տես Խոր. Ա. Էր. Բ. էջ. 3 :

³ Այս աստուած յօտուած ձեռաց թո՛ւի սպրդեալ ՚ի ներքս, զի անյարիր է ՚ի տեղոքս և նիւթ
իսկ բանին խառնակ է : Փառոխ որդի է Գեղամայ, ըստ Խորենացւոյն, որգւոյ Ամասիայ նահապե-
տի : Ի տեղի ուրեք յԵրասուկի թէ այս հատուած բանի Վազարայ Փարպեցւոյ է, որ յետ Ճառելոյ
չձեռնաց՝ ճառէ և զայս :

ստանու ամս հինգ . և ապա մի ըստ միովէ թագաւորեն Մակեդոնացիքն յԱսիա . ստան 'ի ժամանակս ինչ : Եւ Արշակ արքայ հնազանդեցոյց 'ի ծառայութիւն զԱսորեստանեայս , որ ըստ Անտիոքայ , և գթաբեւայի և զՊարսիկս և զՄարս . և զերկիրն Հայոց , մինչև ցեառն մեծ կապկոհ , և 'ի յեզր ծովուն մեծի արեմտից . թագաւորէ Արշակ 'ի Բաբելոն ամս բազումս :

« Եւ եղև յամին հարիւր և տասներորդի չորրորդի Արշակայ արքայի Պարթևաց . 'ի չորրորդում ամի թագաւորութեան Դեմետրեայ 'ի վերայ Ասիաստանի և Ասորոց , մինչև Արշակ արքայ գնաց յարեւելս , զօրաժողով լեալ և Դեմետրիոս չորսու կայաւ զԲաբելոնի :

« Իբրև ետես Դեմետրիոս զի այնչափ բազմութեամբ եկն եհաս 'ի վերայ նորա Արշակ , տեղի ետ նմա և գնաց մինչև ցԱնտիոք , և անդ ճակատեցաւ ընդդէմ Արշակայ 'ի պատերազմ : Եւ եղև պատերազմ մեծ առ Անտիոք քաղաքաւ . հարկանեն և սրբաջունչ առնեն զօրեն Դեմետրեայ . և ձերբակալ առնեն զԴեմետրիոս . կապէ գնա Արշակ արքայն յոտիւք և ձեռք , և առնու գնայ յարեւելս 'ի Բահլ Շահաստան :

« Իբրև ետես Անտիոքոս եղբայր Դեմետրեայ եթէ ըմբռնեցաւ Դեմետրիոս 'ի ձեռս Արշակայ արքայի . ինքն թագաւորէ 'ի վերայ Ասորոց , և Ասիաստանի . զաւրաժողով լինի և գնայ 'ի Բաբելոն : Զկնի տասն ամի ազգ լինի ուրին 'եթէ թագաւորեաց Անտիոքոս եղբայր Դեմետրեայ , և եկն 'ի Բաբելոն :

Իսկ Խորենացի ասէ « Զսա (զԱրտաշէս) պայազատէ նորին որդի Արշակ որ կոչեցաւ մեծ . պատերազմի ընդ Դեմետր և որդւոյն Դեմետրեայ Անտիոքոսնեայ . քանզի 'ի վրայ նորա եկն 'ի Բաբելոն մակեդոնական զօրու , և պատերազմեալ 'ի գերութիւն ըմբռնեցաւ . զոր կալեալ Արշակայ տարաւ 'ի պարթևս երկաթեղէն կապանք , ուստի և Սիրիպինդէսն կոչեցաւ (Բ . Բ .) :

« Լուծանէ Արշակ զԴեմետրիոս զկնի տասն ամի . և արձակէ առ եղբայրն , որպէս զի խօսեսցի ինչ առնել նմա . և Դեմետրիոս ոչ գնաց առ եղբայրն իւր 'ի Բաբելոն , այլ յԱսիաստան անցանէ : Ապա խաղայ գնայ Արշակ 'ի Բաբելոն երեք տասան բիւրովք :

« Յամի հարիւրերորդի քսաներորդի ութերորդի թագաւորութեան իւրոյ իբրև մօտ եղև 'ի Բաբելոն , անկանի 'ի վերայ նորա Անտիոքոս յանկարծակի . 'ի ձմեռն ժամանակի 'ի նեղ վայրի . և ոչ կարեն զօրել . սպառեն զզաւրն , զարկանին և ընկենուն զԱնտիոքոս 'ի խոնարհ և սպանանեն . և ձերբակալ առնեն զՍելևկիոս զորդին Անտիոքայ . զոր ունէր ասէ արքայ 'ի դրանն իւրում թագաւորին :

« Յայնմ ժամանակի թագաւորեցոյց Արշակ զորդի իւր զԱրշակ փոքր կոչեցեալ 'ի վերայ աշխարհին Հայոց 'ի Մծբին քաղաքի . Եւ զատուցանէ նմա սահմանս զԱրուստատ առ երկրաւն Տաճկաց և առ երկրաւն Ասորոց : Եւ զհապուտեցայ առ կիւղեկեաւ 'մինչև ցեզր ծովուն մեծի արեմտից . և ցհիւսիսոյ կողմանէ 'ի լեառն մեծ կովկաս , որ ձգի ընդ կողմանս արեւելից . և ան .

Ահա յայտնի խոտորի 'ի Խորենացոյն զի նա ասէ « Ի ժամանակին յայնմիկ թագաւորեցուցանէ (Արշակ մեծ) զեղբայր իւր զվաղարշակ մերոյ աշխարհիս , զհիւսիսի և զարեմտս տալով նմա սահմանս » (Բ . Գ .) :

ցանկէ առ սահմանաւն առ ամուր աշխարհաւն Մարաց. և հասանէ 'ի լեառն Զարասպ. և անցանէ առ նոր Շիրակ երկրան :

« Եւ յուղարկէ զնա 'ի Մրծանայ ընդ յարեմուտս զօրու մեծաւ եւթանասուն հազարաց սպառազինաց . և մեծամեծ իշխանօք նախարարաց հազարաց բերաւորաց , որում ոչ ոք կարէր զգէմ ունել պատերազմաւ : Սմա ընդ առաջ ելանէր Բագարատն փառազեան ¹ յորդուցն Արամենակայ նախարար մեծ հանդերձ զօրու : Մատուցանէ նմա պատարագ ոսկի և արծաթ . և զարգարէ զնա 'ի սնդր' և 'ի վակաս . պսակէ զնա 'ի թագ հայրենի . և նստուցանէ զնա 'ի վերայ ոսկիապատ փկանակուռ գահոյիցն . և տայ նմա զգուտար իւր 'ի կնութիւն :

« Չսա արար Արշակ արքայ ասպետ Հայաստան երկրին , որ էր իշխան և հրամանատար ամենայն թագաւորութեանն հրամանաց զլուխ , և հայր արքային , և եղբայր , որում ետ իշխանութիւն տէրութեանն այնորիկ : Նա կոտորեաց զճսկայսն , որ զօրաժողով եղէն 'ի վերայ նորա 'ի Միջագետս Ասորւոց :

« Եւ այս են իշխանք Պարթևեաց . որք թագաւորեցինն զկնի Արշակայ հօր իւրեանց 'ի Բահլ Շահաստան յերկիրն Գուշանաց . որդիք չորք ասնն լեալ Արշակայ արքայի Պարթևաց . զառաջինն ասնն թագաւորեցոյց թեոալացւոց աշխարհին . զերկրորդն 'ի վերայ կիլիկեցւոց . զերրորդն 'ի վերայ Պարթևաց . զչորրորդն 'ի Հայաստան աշխարհին ² :

« Եւ լինին ամենայն ամբ Արշակայ կենաց իւրոց 130 ամ . և թագաւորեաց ամս յիսուն և վեց :

Չկնի նորա թագաւորէ որդի նորա Արշակ 'ի վերայ Պարթևաց 'ի Բահլ Շահաստանի յերկիրն Գուշանաց' ամս 70 :

Ապա որդի նորա Աշնալ	ամս 32
» Արշէն	» 22
» Արշաւիր	» 45
» Արտաշէս	» 34
» Դարեհ	» 30
» Արշակ	» 17
» Արտաշիր	» 46
» Պերոզ	» 64
» Վաղարշակ	» 50
» Արտաւան	» 36
» լինին ամենայն ամբ Պարթևաց տէրութեանն	573 ամբ :

Եւ այս են թագաւորք Արշակունիք որ թագաւորեցին Հայաստան երկրի զկնի Արշակայ մեծի :

Արդ՝ թագաւորէ Արշակ փոքր կոչեցեալ յամի հարիւրերորդի քսան և իննեւորդի թագաւորութեանն Արշակայ հար իւրոյ՝ 'ի վրայ Հայաստան երկրի՝ 'ի

¹ Բագարակ 1877 ամի Դ. Պրակ. էջ. 295 :

² Աստի առեալ ասէ Վարդան վարդապետ Ժն . « Բայց լուաք և տեսաք քրով , եթէ որդի երսն (Վաղարշակ) Արշակայ մեծի , և ոչ եղբայր , Եւ էր քանն այսպիսի , եթէ թագաւորն Պարսից ինգրեաց զմինն կէտայ՝ որ 'ի Մծբն յապարանս արքայութեանն Հայոց . և 'ի յառնուէն գտաւ գիր յունարէն , եթէ Ես քրեցի Ագաթանգեղոս . զի մեծն Արշակ ունէր չորս որդիս . զառաջինն թագաւորեցոյց թեոալացւոց . և զերկրորդն Լիւրիկեցւոց , և զերրորդն Պարթևաց . զչորրորդն Հայոց . ապով նմա զսահմանն զոր Հայկն ստացաւ զաւակքն իւրովք եւթն զատեալ իւրոց » :

Մրժուին քաղաքի եղբարք իւրով վաղարշակաւ՝ զոր թագաւորեցոյց Հայաստան աշխարհիս՝ ամս 42

Ապա Արշակ	ամս 73
» Արտաշէս	» 25
» Արտաւան և Արշաւիր	» 12
» Արշակ որդի Արշաւրի	» 37
» Երուանդ որդի Արշակայ	» 21
» Արտաշէս եղբայր նորին	» 52
» Տիրան որդի Արտաշէսի	» 22
» Տիգրան եղբայր նորին	» 42
» Արշամ	» 20
» Աբգար որդի Արշամայ	» 38
» Սանատրուկ քեռորդի Աբգարու	» 30
» Արտաշէս որդի Սանատրուկ	» 41
» Արտաւազդ, և ապա Տիգրան որդիք Արտաշիսի	» 24
» Վաղարշ որդի Տիգրանայ	» 20
» քաջն խոսրով որդի վաղարշու	» 48
» Մեծն Տրդատէս որդի խոսրովայ	» 56
» խոսրով որդի Տրդատայ՝	» 9
Տիրան որդի խոսրովայ	» 48
Արշակ որդի Տիրանայ	» 7
Շապուհ արքայ Պարսից	» 73
Պապ որդի Արշակայ՝	» 7

1 Խորենացի և անանուն այն պատմագիր՝ սկզբնակէս ժամանակագրութեան իւրեանց թուին առնուլ զթուականն Սելևկիացւոց (312), այլ իցէ՛ թէ ուղիւ վարէին նովաւ։ Քանզի յետ մեծին Աղէքսանդրի (323+) անգէն Սելևկոս Նիկիանովը թագաւորէ, ըստ երկոցունց իսկ կարծեաց, և այս վրիպակ մեծ է. զի Սելևկոս զամս երկոտասան կոռսակալ միայն եկաց Բաբելոնի (323-312) և ապա թագ կապեաց (312-279)։ Անանունն կամ գրչագիր նորին անձամբ անձին հակառակի. զի 'ի թիւս ամացն թագաւորաց երկուց յաթորգացն Սելևկեայ՝ Արտիքոսի Սաւուրի և Թէւոսի, 'ի տարեթիւն (11 ամ թէւոսի) ապստամբութեան Պարթևաց և 'ի ժողովուրմն 61 ամացն զորս ծառայեցին Պարթևք Մակեդոնացւոց մարանի ընդ Խորենացւոյն, այլ խոսորի 'ի նմանէ 'ի թիւս ամաց թագաւորութեան Սելևկեայ՝ աշով նմա զամս 38։ Գետ մահուան Աղէքսանդրի ցապստամբութիւն Պարթևաց (323—255—68 ըստ ուղիւ հաշուի ժամանակագրացն) 61 ամաց ժողովուրմն ուղիւ է ըստ Խորենացւոյն, զի 31+19+11=61։

Ապա ոչինչ անհաճոյ թուեսցի ընթերցանելեացն նկարել յաղիւսեկի աստ զկարգ և զտարեթիւ թագաւորաց պարթևազանց Պարսից և Հայոց որ ըստ Խորենացւոյն և անյայտ պատմագրին, յորս յաւելլց և զուղիւ թուեսցեալ հայիւ ժամանակագրութեան պարթև թագաւորաց։

Ըստ խորհրդացոյն

Սեւեկեանք անդէն յետ Աղեքսանդրի:

Սեւեկեոս Նիկանովը նախ քան զՔրիստոս 323 - 292 . 31

Անտիոքոս Սաւտեր 292 - 273 . 19

Անտիոքոս Թեոս 273 - 263 . 10

Ի մետասանին Պարթևք ապստամբին

Արշակ քաջ . 262 - 231 . 31

Արտաշէս 231 - 205 . 26

Արշակ մեծ 205 - 152 . 53

Արշական 152 - 122 . 30

Արշանակ 122 - 91 . 31

Արշէզ 91 - 71 . 20

Արշաւիր 71 - 25 . 46

Արտաշէս 25 - 9 յետ Քրիստոսի . 34

Դարեհ 9 - 39 . 30

Արշակ 39 - 58 . 19

Արտաշէս 58 - 78 . 20

Պերոզ 78 - 112 . 34

Վաղարշ 112 - 162 . 50

Արտաւան 162 - 193 . 31

Գումար 455

Ըստ Ժամանակագրացն

Սեւեկեանք

Սեւեկեոս Ա . 312 - 279

Անտիոքոս Ա . Սոտեր . 279 - 260

Անտիոքոս Բ . Թեոս 260 - 247

Ի հինգերորդ ամին ապստամբին Պարթևք

Արշակ ա . 255 - 253

» Բ . Տրդատ . 253 - 217

» Գ . Արտաւան Ա . 217 - 197

» Դ . Փրիապատ 197 - 182

» Է . Բիւրատ Ա . 182 - 174

» Զ . Միհրդատ Ա . 174 - 138

» Ը . Բիւրատ Բ . 138 - 127

» Ը . Արտաւան Բ . 127 - 114

» Թ . Միհրդատ Բ . 114 - 86

» Ժ . Մնազքեր 86 - 76

» Ժա . Սանատրուկ 76 - 68

» Ժբ . Բիւրատ Գ . 68 - 58

Ըստ Անանուն պատմագրին

Սեւեկեանք

Անդէմիջաբար յետ Աղեքսանդրի:

Սեւեկեոս Նիկանովը . 323 - 285 . 38

Անտիոքոս Սոտեր 285 - 266 . 19

Անտիոքոս Թէոս 266 - 256 . 10

Ի մետասան ամին ապստամբին Պարթևք

Արշակ 255 - 199 . 56

Արշակ 199 - 129 . 70

Աշնաշ 129 - 97 . 32

Արշէն 97 - 75 . 22

Արշաւիր 75 - 30 . 45

Արտաշէս 30 - 4 յետ Քրիստոսի . 34

Դարեհ 4 - 34 . 30

Արշակ 34 - 51 . 17

Արտաշիր 51 - 97 . 46

Պերոզ 97 - 161 . 64

Վաղարշակ 161 - 211 . 50

Արտաւան 211 - 247 . 36

Գումար 502

» Ժգ . Միհրդատ Գ . 58 - 54

» Ժդ . Որոտէս Ա . 54 - 36

» Ժե . Բիւրատ Գ . 36 Ն . Գ . 9 Թ . Գ .

» Ժզ . Բիւրատ . 9 - 14

» Ժէ . Որոտէս Բ .

» Ժը . Վոնոն Ա . } 14 - 44

» Ժթ . Արտաւան Գ . }

» Ի . Վարդան 44 - 47

» Իա . Խոտարզ . 47 - 50

» Իբ . Վոնոն 50

» Իգ . Վոդոզէս Ա . 50 - 90

» Իդ . Բակուր Ա . 90 - 108

» Իե . Խոսրով . 108 - 121

Փարթմասպատ 116

» Իզ . Վոդոզէս Բ . 121 - 150

» Իէ . Վոդոզէս Գ . 150 - 192

» Իը . Արտաւան Գ . 192 - 199

» Իթ . Բակուր Բ . 199 - 209

» Լ . Վոդոզէս Գ . 209 - 216

» Լա . Արտաւան Ե . 216 - 226

Թագաւորք Հայոց ըստ Խորենացոյն և ըստ անանուն պատմագրին

Խորենացի

Վաղարշակ	149 - 127 . 22
Արշակ	127 - 114 . 13
Արտաշէս	115 - 89 . 25
Տիգրան	90 - 57 . 33
Արտաւազդ	56 - 34 . 22

(Պարապ միջոց)

Արշամ	22 - 2 . 20
Սբգար	2 - 36 . 38 յետ Գրիստոսի
Անանէ, Սանատրուկ	36 - 38 . 2
Սանատրուկ	38 - 66 . 28
Երուանդ	34 - 54 . 20
Արտաշէս Բ.	54 - 95 . 41
Արտաւազդ Բ.	95 - 97 . 2
Տիրան Ա.	97 - 118 . 21
Տիգրան Բ.	118 - 159 . 41
Վաղարշ	159 - 179 . 20
Խոսրով Ա.	179 - 227 . 48
Միջոց պարապոյ .	227 - 254 . 27
Տրդատ	254 - 300 . 56
Խոսրով	300 - 309 . 9
Տիրան	309 - 320 . 11
Արշակ	320 - 350 . 30
Պապ	350 - 357 . 7

Անանուն Պատմագիր

Արշակ փոքր	198 - 156 . 42
Արշակ	156 - 143 . 13
Արտաշէս	143 - 118 . 25
Արտաւան, Արտաշիւր .	118 - 106 . 12
Արշակ	106 - 69 . 37
Երուանդ	69 - 48 . 21
Արտաշէս	48 - 4 յետ Գրիստոսի . 52
Տիրան	4 - 26 . 22
Տիգրան	26 - 68 . 42
Արշամ	68 - 88 . 20
Աբգար	88 - 126 . 38
Սանատրուկ	126 - 156 . 30
Արտաշէս	156 - 197 . 41
Արտաւազդ, Տիգրան	197 - 221 . 24
Վաղարշ	221 - 241 . 21
Խոսրով	241 - 289 . 48
Տրդատ	289 - 345 . 56
Խոսրով	345 - 354 . 9
Տիրան	354 - 402 . 48
Արշակ	402 - 409 . 7
Շապուհ	409 - 482 . 73
Պապ	482 - 489 . 7
Աստ աւարտի անյայտին աղիւսակն :	

Հ. ՆԵՐՍ. ԶՆՈՅԵԱՆ.

1 Ժամանակագրութեան Խորենացոյն 'ի ընէ չիք կէտ հաստատուն՝ այլ կարծեօք միայն սեշեւ կեան Թուականօք վարել Թուի, որով չիք և ուղիղ Թուարկութիւն կարգի Թագաւորաց և ոչ ան վրիպակ ժողովունմն Թուոյ ամաց պարսիկ և հայ արշակունի հարստութեան. վասն որոյ բազում պարապոյ միջոցք գտանին յորոց զծանօթան միայն նշանակեցի: Անանուն մատենագիրն ուղիղ ևս է 'ի բովանդակութեան ժամանակի հարստութեան Արշակունեաց և 'ի Թիւս կարգի Թագաւորաց, բայց և ինքն հակառակածն սխալէ. զի ըստ Խորենացոյն բովանդակութիւն ամացն արշակունի հարստութեան 149-ր մինչև ցՊապն կամ 357=306 և ըստ անանուն մատենագրին 198-ր 489=687, բայց որովհետև Շապուհ վրիպակաւ հաշուի 'ի կարգս Թագաւորաց Հայոց յանանուն մատենագրէն որով 687—73=614 . 108 ամօք առաւելեալ բան զԽորենացոյն ամաց ժողովունմն. այլ ամենայնիւ յայտ է Թէ բազում ճշգրութեանց տակաւին կարօտիմք: